«Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 9-ի N290-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ _____ 2024 թվականի N _____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 9-Ի N290-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում ԱՏԳ ԱԱ 2402 ծածկագրին դասվող ապրանքների՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում նույնականացման միջոցներով դրոշմավորման կանոնները սահմանելու մասին» N290-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման և որոշման N2 հավելվածի վերնագրերում «2402 ԾԱԾԿԱԳՐԻՆ» բառերը փոխարինել «2402, 2404 11 000 9, 2404 12 000 0 ԵՎ 2404 19 000 ԾԱԾԿԱԳՐԵՐԻՆ» բառերով,

2) որոշման 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետ՝

«1.1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետությունում 2024 թվականի հուլիսի 1-ից Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ԱՏԳ ԱԱ 2404 12 000 0 և 2404 19 000 ծածկագրերին դասվող՝ դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա

ապրանքների, ինչպես նաև ԱՏԳ ԱԱ 2404 11 000 9 ծածկագրին դասվող ապրանքների դրոշմավորումն իրականացվում է հիմնական մոդելի համաձայն։»,

3) որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ԱՏԳ ԱԱ 2402 ծածկագրին դասվող՝ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման ենթակա ապրանքները Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով՝ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված լինելու դեպքում կարող են չդրոշմավորվել հիմնական մոդելի համաձայն։»,

4) որոշման 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին և 2.2-րդ կետեր՝

«2.1. Սահմանել, որ մինչև սույն որոշման 1.1-ին կետով սահմանված ժամկետին նախորդող օրը ներառյալ ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 393-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ դրոշմապիտակների տրամադրման հայտերի (այսուհետ՝ հայտեր) հիման վրա ստացված դրոշմապիտակներով՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով դրոշմավորված լինելու դեպքում ԱՏԳ ԱԱ 2404 12 000 0 և 2404 19 000 ծածկագրերին դասվող ապրանքները կարող են չդրոշմավորվել հիմնական մոդելի համաձայն։

2.2. Սույն որոշման 1.1-ին կետով սահմանված ժամկետից սկսած ներկայացված հայտերի հիման վրա ստացված դրոշմապիտակների վերաբերյալ ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերագրման, հաշվառման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով գրանցումներ ԱՏԳ ԱԱ 2404 12 000 0 և 2404 19 000 ծածկագրերին դասվող ապրանքների համար չեն կարող կատարվել։»,

5) որոշման 3-րդ կետում «ապրանքների» բառից հետո լրացնել «, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ԱՏԳ ԱԱ 2404 12 000 0 և 2404 19 000 ծածկագրերին դասվող ապրանքների, ինչպես նաև ԱՏԳ ԱԱ 2404 11 000 9 ծածկագրին դասվող ապրանքների» բառերը,

6) որոշման 4-րդ կետում «2402 ծածկագրին» բառերը փոխարինել «2402, 2404 11 000 9, 2404 12 000 0 և 2404 19 000 ծածկագրերին» բառերով,

7) որոշման 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին կետ՝

«4.1. Հաստատել ԱՏԳ ԱԱ 2404 11 000 9 ծածկագրին դասվող ապրանքների՝ մինչև դրոշմավորման ներդրման ժամկետը չօտարված՝ դրոշմավորման ենթակա ապրանքային մնացորդների դրոշմավորման կարգը՝ համաձայն N3 հավելվածի։»,

8) որոշման N1 հավելվածի վերնագրում «ԱՊՐԱՆՔՆԵՐԻ» բառից հետո լրացնել «, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 390-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ

1-ԻՆ ՄԱՍՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԱՏԳ ԱԱ 2404 12 000 0 ԵՎ 2404 19 000 ԾԱԾԿԱԳՐԵՐԻՆ ԴԱՍՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՏԳ ԱԱ 2404 11 000 9 ԾԱԾԿԱԳՐԻՆ ԴԱՍՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ» բառերը,

9) որոշման N1 հավելվածի՝

ա. 1-ին կետում «ապրանքների» բառից հետո լրացնել «, օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ԱՏԳ ԱԱ 2404 12 000 0 և 2404 19 000 ծածկագրերին դասվող ապրանքների, ինչպես նաև ԱՏԳ ԱԱ 2404 11 000 9 ծածկագրին դասվող ապրանքների» բառերը,

բ. 9-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն.

«ԱՏԳ ԱԱ 2404 11 000 9, 2404 12 000 0, 2404 19 000 ծածկագրերին դասվող ապրանքների դեպքում նույնականացման միջոցը փաթեթավորման վրա փակցվում է փաթեթավորման ցանկացած հատվածի վրա։»,

10) որոշման N2 հավելվածի՝ «Սպառողական փաթեթավորման դեպքում» աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Քայլ 2. Ապրանքի հատկանիշներ

Ապրանքի նույնականացում			
NN	Դաշտի անվանումը	Պարտադիր դաշտը	Մեկնաբ
ը\կ			
4.	Ապրանքի անվանումը	Այո	
5.	Ապրանքային նշանի անվանումը	Ոչ	
6.	Ապրանք միավորի քանակ փաթեթի մեջ	Ոչ	
7.	Զտաքաշ, գ (գրամ)	Ոչ	
Արտադրող			
8.	Արտադրողի անվանում	Այո	
9.	Արտադրող ընկերության պրեֆիքս	Պարտադիր է՝ տեղական արտադրանքի համար, ոչ պարտադիր՝ ներմուծվող ապրանքի դեպքում	GS1 կազ տրամա
Սպառողական բնութագրեր			
10.	Ծխախոտի արտադրանքի տեսակ	Այո	
11.	Ծխախոտի արտադրանքի համ	Այո	
12.	Ֆիլտրի առկայություն	Ոչ	2402 դա
13.	Արդյո՞ք պարունակում է մենթոլ	Այո	2402 դա
Սպառողական փաթեթավորում			

14.	Փաթեթավորման տեսակ	Այո	
15.	Փաթեթավորման նյութ	Այո	
Համապատասխանության մասին հայտարարագրեր/վկայականներ			
16.	Համապատասխանության փաստաթղթերի մասին տեղեկատվություն	Այո	
17.	Ծագման երկիր	Այո	
18.	Ծխախոտի հումքի զանգված	Ոչ	2404 11 դեպքում
19.	Նիկոտինի կոնցենտրացիան	Այո	
20.	Հեղուկի ծավալը (մեկ սարքում / քարթրիջում), մլ	Այո	2404 12 2404 19 դեպքում
21.	Բաղադրությունը	Այո	2404 12 2404 19 դեպքում
22.	Ծխի քանակը	Այո	2404 12 2404 19 համար
23.	Մարտկոցի հզորությունը	Այո	2404 12 2404 19 համար

»,

11) որոշման մեջ լրացնել N3 հավելված՝ համաձայն հավելվածի։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

Հավելված

ՀՀ կառավարության 2024 թվականի

_____ __-ի N ___-Ն որոշման

«Հավելված N 3

ՀՀ կառավարության 2023 թվականի

մարտի 9-ի N 290-Ն որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ «ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ» (ԱՏԳ ԱԱ) ԴԱՍԱԿԱՐԳՉԻ 2404 11 000 9 ԾԱԾԿԱԳՐԻՆ ԴԱՍՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ՝ՄԻՆՉԵՎ ՀՍԿԻՉ (ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ) ՆՇԱՆՆԵՐՈՎ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՉՕՏԱՐՎԱԾ՝ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա ապրանքների մինչև հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ներդրման ժամկետը չօտարված՝ դրոշմավորման ենթակա ապրանքային մնացորդների դրոշմավորման հետ կապված հարաբերությունները:
2. Հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող կամ ներմուծող հանդիսացող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից մինչև սույն որոշման 1.1-ին կետով սահմանած ժամկետը ներառյալ արտադրված կամ ներմուծված՝ հսկիչ (նույնականացման) նշաններով չդրոշմավորված՝ 2404 11 000 9 ծածկագրին դասվող ծխախոտային արտադրանքի իրացումը թույլատրվում է մինչև սույն որոշման 1.1-ին կետով սահմանած ժամկետը ներառող ամսվան հաջորդող երկրորդ ամսվա վերջին օրը ներառյալ:
3. Անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա ապրանքներ իրացնող անձանց կողմից մինչև սույն որոշման 1.1-ին կետով սահմանած ժամկետը ներառող ամսվան հաջորդող երկրորդ ամսվա վերջին օրը ներառյալ ձեռք բերված՝ հսկիչ (նույնականացման) նշաններով չդրոշմավորված՝ ԱԱ 2404 11 000 9 ծածկագրին դասվող ծխախոտային արտադրանքի՝ առանց հսկիչ (նույնականացման) նշաններով իրացումը թույլատրվում է մինչև սույն որոշման 1.1-ին կետով սահմանած ժամկետը ներառող ամսվան հաջորդող երրորդ ամսվա վերջին օրը ներառյալ:

4. Սույն կարգի 2-րդ և 3-րդ կետերում նշված անձանց հսկիչ (նույնականացման) նշանները տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված ազգային օպերատորը՝ թվային եղանակով:

5. Սույն կարգի 2-րդ և 3-րդ կետերում նշված անձանց կողմից հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա՝ չդրոշմավորված ապրանքների մնացորդների դրոշմավորումն իրականացվում է սույն որոշման

N1 հավելվածով հաստատված կանոններին համապատասխան։»։